 Միննագ՝ Արդընի գարմնջով գը:
 Գելին Էրթան Սըդընի գարմնջով գանյնին:
 Գելին Խլիովիդ գյուդը,
 Մեգմ՝ գլգլի ցան ը գենը:
 - Բլո՛, - գըսը, - ո՞ւր ը գերթաս:
 Գըսը. - Գերթամ Մասուն:
 Ըքը. - հըդը ցանքսի վա՛խս, կարնան կլո՛ւխ:
 Գըսը. - Ըմ հոկի՛ն, իրգուն դեսնամ՝ դդեմ՝ մըր փալով էգավ,
 Հարծ-փուրծ, հարծ-փուրծ, հարծ-փուրծ՝
 Էլավ մըր օդորմաչիգ Մհերի դդեն:
 Հիմի էգիր ը, գդանիմ ըր ապո քով, առնամ իքամ:
 Ըս Մամա՛ւ, գլգլի սերմացուն լը բդի ցանեք,
 Գքայխի, - ըսիւ, - թողիր իմ էգի:
 Գիքը գփալիայը դդին, գքաքը.
 - Ըմ հո՛կին, - գըսը, - քիւրմ՝ գելի, քիւրմ՝, քիւրմ՝,
 Մհերի դիխ գ՛գդըդ ըդի:
 Գընցու, գդանը Ծենով Օհանի դուն:
 Օհան հընդը նսաուգ: Գնգան գըսը.
 - Զուոսիմ՝ պի՛ր, թը՛խ նսալի:
 Գնսալի:
 - Բլո՛, - գըսը, - ըդի քու դդե՛ն ը:
 - Օհա՛ն, ախպրո՛, ըդի քու ախպրո՛ Մհերի դդը
 Տավի՛տն ը:
 Իրգուն հնդեք աուրս,
 Մթան, մեգ էլ դեսը՝ մըր փալով Էրեխեմ՝ գիքը:
 Գաննը նայե՛ցի, նայե՛ցի,
 Էգա՛վ, էգա՛վ, հարծ ու փուրծ՝ Էլավ մըր Մհերի դդը Տավիա:
 Ըսը՝ մննագ Մարը Ի՞մալ իս էգի.
 - Ո՞ւր ը գերթաս՝ - Ըմ ապո քով:
 Ըլ Էլը ըսոր պերեցի էգը:
 Գին հընդը առան մեճ.
 Ըսիւ. - Յը՛ս որպ քըհող չի՛մ:
 Բլոն քիպ գգանի՛ քուֆըմ՝ լը գիդը,
 Զուֆը լը թըխ մնը.
 Ոչ թը մե՛գ քուֆը, հըլը Բլոն հնդը գքֆըր՝...
 Գթողը գիքը, գըսը.
 - Օհա՛ն, ըմ հոկի՛ն, ըս Մամա՛ւ,
 Ըմ գլգլի սերմացուն գքայխի,
 Գոնէ Էրթամ փոխմ՝ միճն վաղ՝ ցանիմ,

Հնավորուշուն չկը՝ բոլի ըսօր էրթամ:
 Մըհընը գենը, ըր շուր էրթը,
 Օր ըղթես ըսից՝ ըր սիրդ տրաքվալ...
 Բլոն թողից էգավ: Տավիտ մնաց:
 Պերից Օհանի գնիգ գորեգը հաց տրից Տավտին,
 Գորում՝ լը թթու թան:
 Գերավ, բարգավ քնավ:
 Էլան տոավոդյան, իճավ ծորագ:
 Բարգիր ը ճաղցի տուռ:
 Կնաց չորքուց պարդիմ՝, գանճից.
 - Էրեխե՛ք, արեք ջոքք խաղաք:
 Էգան մե քսան-էռեսուն Էրեխը լցվան պարդու վրը.
 Զպարդին պաց թողից՝
 Ամե՛գ մի դեխ ընգան:
 Նեռալով էգան Օհանին.
 - Յըմա՛ն, ի սերն ասսու,
 Տավիտ ըղթես պան արից,
 Էլ որ Էրեխեն՝ կլուխն ը ճարտի,
 Թեն ը ճարտի, ողն ը ճարտի,
 Սաղ մեռիր ին, մի հիլւջ արը,
 Մի՛ թողը Էրեխեցնու մեճ:
 - Լա՛վ, - ըսից, - վալ կկառնիր պերեք, չը՛ս թողը իքը:
 Ուլիր, կառնիր հըվըքեք ըղեխ, քաղքի գողկ՝ օղի,
 Ուղարգիմ էրթը կառներու հիդ,
 Էրթը Ձովասար, չըմ թողը իքը:
 Գհըվըքին պերին:
 Գշկը դուռում, առավորդյան, գվերու էրգու գորեգը
 հաց, գերթը:
 - Տավի՛ա, լա՛ո, - գըսը, - վըդ ուլիր քըն դըդի, թո՛ւղ
 թըղ Էրթան:
 Գերթաս Էլիս գուի վրը,
 Ըղեխ չու՛ ը, անըղագ ը,
 Բիրդան լողանալ սրան չեղնի,
 Նասի սեյր արը, ուլիր գարաշին, Է՛, արա՛խա ը:
 Վերուց Օհանը վՏավիա արից կառներու հիդ:
 Կառնիր քշից Էլավ Ձովասար:
 Մե աղվիս թոավ՝ ընգավ իդիվ աղվսուն,
 Մեգ տառծավ՝ հարուր, դէ՛, Ձովասարն ը,
 Վայրենի ընգավ ու հըվըքեց.
 Է՛լ առուծ, Է՛լ վայրի խուլ, Է՛լ արծու քոթոթ,
 Է՛լ ջընըվար չմնաց,
 Նառնից կառներու հիդ, իրիգուն քշից պերից էգավ:
 Էրեխեք էգան կացին, վըդ իրանց կառնիր ճուգեն՝
 Կառ չկը՝, սա՛ղ ջընըվար ին:
 Նեռացին էգան դուն, կացին Օհանին.
 - Օհա՛ն, ի սերն ասսու,
 Տավիա հըվըքիր ը, ջընըվար սար չմացի, վիրանց ճղիր,
 Ո՛ւլ չկը միճվին, կա՛ո չկը միճվին,
 Սա՛ղ վայրենի ջընըվար ին:
 Գելի էրթը. - Մ՛յ Տավիտ, լա՛ո, վըդուք ի՞նճ իս պերի,
 Ըդուք սարու ուլիր ին,
 Մըք ըղուց միս չըք ուղը,
 Ծո՛գը, ճո՛գը, լա՛ո, ճո՛գը թըխ Էրթան,

Միխկ ին, հըդը մյուսնիր թը՛խ մնան:
 Գճուգը ու գքը, գերթան սար:
 Գիքան վիրանց ուլ ու կառ գդանին,
 - ՉԷ՛ղնի, - գըսը, - վառ Էլի ըղթես գենը,
 Պոնիմ տրիմ դավրի հիդ:
 Առավոդ գըսը. - Դավար պերե՛ք, թըխ դանը:
 Գըսը. - Լա՛ո, ըղ մանդր ուլիր վըզի գչարչրին,
 Պայծ իդը մալիր՝ հանգիստ ին:
 Կնըքեզի համար գուլի վրը նստի,
 Ո՛չ մի դիխ, մննագ չլողանա չովը:
 Գելի Ձովասար:
 Ըղթես Է՛լի գըռը. վագր ը, առու՛յ ը գթոնին,
 գընգնին քամագ,
 Էլ աշխարհ ինճ ըգը՝ կել, արճ,
 Յըս ինճ կիդեմ, վայրենի խուլ, գընգնի ու գհըվըքը,
 Գհըվըքը, սաղ գպերը խառնը նախրի հիդ:
 Իրգուն գքը գլցնը քաղաք:
 Զաղքիք գդեսնան, գիդան խիռուն-միռուն,
 գվազան Օհանին.
 - Օհա՛ն, ի սերն աստչու,
 Տավիա կազան չթողի, հըվըքիրը սաղ,
 Նառնիր ը նախիր, պերից էգավ:
 - Դղե՛ք, - գըսը, - վըլը յու լը չըմ գիշխնը Էրթը,
 Թող մնը առավորդյան դեսնաք ինճ գենը:
 Գըռը, գըսը.
 - Վիր մե մալ ը՝ Էրգուս իմ պերի,
 Արե՛ք, արե՛ք, պճըր մալիր դարե՛ք,
 Դե՛ս, փագիր ին կառնիր, մդի մեճ, գվըխընան:
 Գարը պփեդ կլխը դագ,
 Գբարգի մո՛ւշ - մո՛ւշ իրին հըմար գքնի հըլալ լուս:
 Լուս գապցվի, արիվ գառնը,
 Օհան գիքը՝ կազաննին հնդին մեճ, չիշխնը շարժվի:
 - Մ՛յ Տավի՛տ, լա՛ո, Էսաուք ընչի՞ իս հըվըքի պերի,
 Էսաուք սարի դավար ին,
 Ըղուց միս չո՛ւղվի, մզի բեակ չիքը,
 Ծո՛գը, ճո՛գը, լա՛ո, մալիր թըխ մնան,
 Էստուք ճո՛գը, թըխ Էրթան:
 Գճուգը, քըն գիդը Ձովասար, գիքը դուն:
 Օհան գըսը. «Ըլ չԷ՛ղնի,
 Դանիմ էրթամ ընչ հիդ չուր»:
 Գելին առավորդյան. - Տավի՛տ, լա՛ո, քը՛լ Էրթանք չուր,
 Արան գլզի, կարին ցանելու վախթն ը,
 Ցանքսի վախթն ը:
 Գդանը գերթը չուր.
 Ագոավ գերթը՝ հնդը հիդ գերթը,
 Մյուս ագոսին՝ գտառնը.
 - Ապո՛, ըմ հոկին, ապո՛, դուր փշուրմ՛ը:
 - Լա՛ո, հեռեցի, իդա՛ս քու ասսու խաթր,
 Գթոնի Էս խուփ, գառնը Էգան ողը, գսխաի,
 Գմնը մըր ցանքս առանց Էնիլ,
 Հեռեցի՛, լա՛ո, մխանգարը ընչի, մեռնի՛մ ըմ կառան:
 - Ապո՛, ըմ հոկին, հըմը՛ փշում՛, հըմը՛ փշում՛,
 Գենը-չենը՝ չգըռնը վրեն,

Մահ գառնը ծեռքից,

Ծիռ գայերը, պերգու յըս՝ թըփ...

- Վա՛ր, ապո՛ւ, ղդուք միխկ ին, հըրցգը՛, հըրցգը՛:

- Լա՛ո, հեռըցի՛ վար էնիմ:

- Ապո՛ւ, հըրցգը՛, միխկ ին ղդուք:

Գհըրցգիմ, յես գքաշիմ՝ տու վարք:

Ձեպնիր գհըրցգը, գիդը վերիվ,

Գիքը, պծիռ թըլը կորչավուր:

- Ապո՛ւ, վա՛րք:

Գթոնի ապոն, վըտկ գարը հարորին,

Ուր վրը լը հիլաք չկը:

- Լա՛ո, գամտց կնը, Լա՛ո, գամայ կնը:

Արդ բդի էրգու օր վարեր,

Մինչև իրիգուն պտոդ վարից:

Տառցավ էրգոնից, մութ դվից, էգան դուն:

Առավոդյան բդի դանը սերմը,

Պերից պեշ, օր պառնը սիրմ:

- Ապո՛ւ, ի՛նքն զգենիս:

- Լա՛ո, սիրմ պառնանք, դանիք ցանիք պարո:

- Վը՛յի, տպո, միխկ ը, ղդուք օտկիր պարագ ը, գճարտվի:

- Տո Լա՛ո, ըլ ի՛նչ էնիմ:

- Դը ապո՛ւ, դո՛ւր, յես գթըլիմ վըր ըմ թևին՝ գերթամ:

Ծթոդից պառցան իշու վրեն,

Վերն, պեշ քշից տրից նախիր,

Սիրմ թըլից վըր թևին՝ կնային:

Ապոն պարդ ցանից, ապիանից,

Ոնցան ուրիշ արդ, վարեցին,

Մե խոսքով, մի շապատ էր, ինչ էր,

Պուլուր ցանքսիր արից քոչավ:

Ծիկից տիր ու կըվան,

(Ջըդ նեդ-աղեդը, ղր գըսին,

Հիմի օր փեդմ՝եղնի՝ գսարքիմ):

Ծիկից աիր ու կըվան, օր չերթը քաղաք,

Ծիկից ըսից. - Լա՛ո, էս ջնջղներու միս անուշ ը,

Ջըդ ջնջղնիր գպարգիս, գպերիս՝

Ղեպիք յես ու առ գուդինք,

Պայծ քաղքի մեճ չմղնիս պըրգի՛ս,

Գհանիս մեգի աճկ, Լա՛ո,

Գիքան սպանին պըսի լը, քպի լը:

- ԾԷ՛, ապո՛ւ, ինչ վըր ըսիս, յըս գենիմ:

- Հա՛, - Լա՛ո, քաղքից տուրս, քարերի յառերի վրեն պարգ:

Ոնգավ՝ չը՛րթ հա չը՛րթ, ջնջղնիր գպարգեր:

Մարը Մելիք գաննավ, մեգ ամիս չեգավ.

Ոսից. «Տավիտ քցերին ճուրը,

Թը ըննի ճրի հիդ կայի՛ Լա՛վ,

Թը ըննին ըզըդի՛ վո՛ր ը»:

Ջամայից յուր ըծդըհըններուց ըսից.

- Կնայե՛ք, յոտ գող օսկի Ծենով Օհանից ուպեր,

Յոա դարվա դուրք պերեք:

Գեյին իկան, Ծենով Օհանից պօսկին գուպին:

Ծենով Օհան պօսկին գլցնը գող՝

Ոնուք գչափին ու գտարդգին:

Տավիտ կայե ընգե բառվու գորեգի մեճ:

Բառաք կնայ դեսավ՝ լուր ը գպարգը,

Ջնջուղ ը գպարգը, գ՛գոխըքը վուր գորեգ:

- Է՛, Տավի՛տ Լա՛ո, - ըսավ, - պքու հոր օսկին

գողերո՛վ ը գչապին, դանին,

Էգիր իս պըմ գորեգնի՛ն գորոռիս,

Ջնջուղ գապանիս դանիս, ուդի՛ս:

- Դադի՛գ, պօսկին օ՛վ ը գչափը դանը:

- Լա՛ո, Մարա Մելիք ուղարգիր ը վուր ըծդըհընիր,

Յոա հոկի էգիր ին:

Ջքու հոպոն հնդը պօսկին գողով գչափը,

Գիդը պիրանց, դանին:

- Վըլը, դադի՛գ, գերթամ՝ չը՛մ իդը:

- Լա՛ո, թը Մհերի դղեն իս՝ մի՛դը:

Գերթը գաննի:

Ծենով Օհան ընդը գող գլցը,

Ջուր թև գպարգը վրեն, գվերու տարդգը:

Գերթը Տավիտ գըսը. - ղդ ի՛նքն զգենիս:

- Դը գորի՛, լտգուդ,

Քու ի՛նքն պան ը, ի՛նքն ը գենիմ:

Հըմը գնեղենը, գթըլը պծիռ գող պօսկին գտարդգը,

Գպըրգը գող մեգի կլուխ.

Հըլը գող հնդը գերթը՝ ...

Գպոնը մյուս վից հոկին, պըրգը քաղ լղջը,

Մեգի անգջնիր լը գքըշը բոգը, գըսը.

- Կնը ըսը քու Մելիքին՝

Մեգ էլ, մեգ էլ չի՛քը, օսկի չուպը,

Ջանգջնիր հմլը՝ գրոգիմ:

Գերթը

Մելիք գդեսնը ղդուք արնուդ, արնվը,

Մեգ՝ պանգջնիր պոգուդ, էգան:

- Ի՛նքն ը եղէ, ախ հա՛, Տավիտ սա՛խ ը:

Գելի գենը մորլիպայիս,

Է՛լ Հնդգսաանից, է՛լ Ոնդոնեպիայից,

Է՛լ յես ինչ կիդեմ հըսնի որդեխ,

Ինչքան ղր մահմեդագան մը գը,

Հըպարներով հըվըկեց, դըսնչորս դըրեգանից

մինչև յոթանասուն,

Թը՝ գերթանք Ասսուն ավիրինք,

Պերինք Սասնո արքանք լը՝ ուդինք:

Էգավ:

Էգիր ը լլվի Սասուն, լլվի աաշաի մեճ,

Հըպար- հըպարներով ը Էգի,

Պուլուր ծիավոր,

Տո թրո՛վ, ոըմո՛վ, յես ինքն կիդեմ ինճով:

Տավիտ հնդը բարգուդ գորեգի մեճ:

Օհանը քըշիր ը պող, տրի պօսկին առան, հընդը գչափը,

Որ դանին թըլին Մարա Մելիքի օսկերի վրեն,

Մղ ու հայով, ղր չգողորը, չփջայու մըր էրգիր:

Բառաք գերթը գըսը.

- Է՛, Տավի՛տ Լա՛ո, Է՛լի էգիր իս պըմ գորեգնի՛ն գորոռիս,

Քու հորոխաքը պօսկին գչափը, գլցնը թեոնիր,

Թա՛րգ դուր, ղդի քպի չգչտայու:

Էգիտ իս պըմ գորե՞գ գտվոխս,
 Ջնջուղ պորգիս, դանիս ուղի՞ս:
 - Դադի՞գ, - գըսը, - Մարա Մելիք ընչի՞ք էգի:
 - Իգիտը, լա՛ն, ըն ճուր ըր անցիտ իս,
 Գհիշի՞ս պըն գարմունջ:
 Ըբը՝ հա՛,
 - Ընքամ պորքը ք պերի,
 Օր պըն ճուր խմիր ին, չորսցի:
 Հաշիվ վերցու, թը ինչքան պորքը ք պերի, իգի մեզ վոն,
 Գգողորը, գսպանը, գդանը պմըր արբանք՝ ուղե՞
 - Վըլը, դադի՞գ, գերթամ գովիմ.
 Խըջերգաթ, ագիջ պան ունի՞ս, դադի՞գ:
 - Լա՛ն, ի՞նճ գենիս պըդուք:
 - Գերթամ Մելիքի տեմ գոիվ:
 - Վըլի՛, լա՛ն, շշով, ագշով տու Մելիքի տեմ իմա՛լ
 գոիվ գենիս,
 Զա՛լը, կնը քու հորոխալեր Օհանիս ուզը,
 Ըսը՝ պըմ բաբու, պըմ հոր պրեխլի շաբիկ դո՛ւր,
 Ըմ հոր քուր՛ս դուր,
 Ըմ հոր Թուրիգ Ջըլըլին դո՛ւր, թամբը՝ սըղըֆեն,
 Թուր Գայյազի՛ն դուր:
 Կնը պըդուք ուզը, լա՛ն, չղվիս՝ պոռով ա՛ն:
 Ըսիս. - Գնստիս, էդ ճուր օր գիքը,
 Թուրիգ Ջըլըլին պքի գդանը, լա՛ն,
 Գերթաս գէլիս Ախսարգա Օծմազ նը,
 Գէլիս ըդ ախարի վոն՝
 Թուրիգ Ջըլըլին գգաննի,
 Յոտ քուի ոխի սաբուն գուպիս վերցուս,
 Մէ հադ բոռշ գուպիս վերցուս,
 Գէլիս ախարի վըրեն:
 Ջիվմեք պրու օղկերուն միշ ը,
 Յոտ հոխը պամբազ ուզը, լցը մեճ՝ հակի,
 Թուրս միշ ը, յոտ հոխը լը լիս քուրսի մեճ՝ տիր կլուխտ:
 Գըսը. - Գէլիս ախարի վոն,
 Երով գլվաս Թուրիգ Ջըլըլին,
 Թը քընի դարի յը, յոտ-ուս դարի յը,
 Իմալ վըր գաբիր իս՝ ըմալ մացիր ը,
 (Ջըղի չըսեցի) հա՛, գէլիս ախարի վոնեն,
 Յոտ գդուր սաբուն գըրգիս Թուրիգ Ջըլըլու վոնու գլվաս,
 Լվա՛ս, լվա՛ս, մաքո՛ւր գմաքրիս:
 Հա՛, չթողիս Թուրիգ Ջըլըլին դիս էրթը:
 Ախարի վերն արող ը.
 Զընի դարի ը, օր տուրս չէգի, գաբուգ ը էղի:
 Գըսը. - գարաշի իրին. տու դգլուպի,
 Գբըդիս, գոլ ըզը առաճ, գլողանաս,
 Գէլիս ճուր գխմիս,
 Գիկը Թուրիգ Ջըլըլին, պքի գիցսու Մելիքի գովին:
 Օվոպանա՛ս:

Գիկը՝ գուզը պարուր:
 Հորոխալեր գալերը, միննազ գըսը.
 - Թու սովորորողի վի՛զ գողրի:
 Գալերը պըդ իրիք գիդը, գմնը Թուրիգ Ջըլըլին:

- Լա՛ն, - գըսը, - Թու օղորմաշիգ հեր օր մահացիր ը,
 Ջտուր մարտ չգըրցի պացի,
 Իրան ճուր ը, ինչ-օր էղիր ը՝ էրթգեն իմ դվի,
 Հնավորուչուն չկը առու սլանալ:
 Գըռնաս՝ կնը հըրցգը, վե՛ր:
 Գպանը պտուտ, գերթը,
 Թուրիգ Ջըլըլին գհոհոը,
 Գերթը գհըրցգը, գհանը պտուտ, գգանի:
 - Սպո՛, - գըսը, - մէ հադ բոռշ պի՛ր:
 Թոռշ գալերը, գըսը.
 - Յոտ գդուր սաբուն լը պի՛ր:
 Պամբազ լը գուզը, գլցնը, գհակնի:
 Զառաք գըսը. - Լա՛ն,
 Էս էրգու գորեգը հաց տիր քու չուս,
 Ընդիս օր լողանաս՝ գուդիս,
 Թու դադոն քպի պան չի՛դը, յը՛ս կինամ:
 Էրգու գորեգը հաց գտըր բառաք չուս,
 Գիքը գբադրաստը, գէլի Օծմազը վոնեն:
 Օին գաննամ, իճավ:
 Զըջիս, պճուր լցիս ծիու վըրեն,
 Սաբուն պարգիս սաբոնիս, լցիս սաբոնիս,
 Լցիս հըրի, հըսավ պանգջնիր, բոշը, տողոկնիրը:
 Զառաքն ը. ըսիր ը՝ մաքուր գլվա՛ս:
 Սաքո՛ւր գլվը, գբըչնի:
 Թուրիգ Ջըլըլին գքըջվի ախարի գոխկիր՝ գսկսը արաշիլ:
 Ընքի գլողգնը, պճուր գխմը՝
 Զա՛լ, բա՛լ, բա՛լ, բա՛լ, փքա՛վ, ուռա՛վ, ուռա՛վ էղավ
 մէ հադ ըժդըհա:
 Էլավ, քանդիս պամբակ քուրսի միճուս՝
 Հապիվ էղավ կլուխ,
 Ջիվմեքի միճուս քանդիս պամբազ՝
 Հապիվ էղավ օղվնուն:
 Վըլը, վերուս բաովու գորեգ հաց,
 Սովաշ էր, գերամ,
 Նստավ Թուրիգ Ջըլըլին,
 Թուրիգ Ջըլըլին պընքի ֆոցո՛ւս,
 Պերիս Թեմա սար, Մըղնիր՝ գաննամ:
 Տավիտ գբողը. - Օ՛վ քնո՛ւգ ը, պարանեցե՛ք,
 Օվ թամբաշ ը՝ էլեք հեչե՛ք,
 Չըսե՛ք Տավիտ կուղ-կուղ էգավ ու կնաց:
 Գիճնի տաշա՝ պորքի մեճ,
 Թուր Գըյազի՛ն ծիոք,
 Զգըյազի թուր ըր գթըլը՝
 Ջմարտ ու ծին իրարու հիդ գպտըր,
 Ըմբես էղավ, օր արուն պջանդըզնին վերուս,
 Զիս դարավ Զաթմանա կե՛դ:
 Մէ չերունի ըսիս. - Չեղա՛վ, մը՛ք գվերճանանք,
 Թողե՛ք, յըս գերթամ բըղըսխանիմ Տավտին:
 - Հը՛, յոռը՛, գուլա՛շ գուպիս:
 - Հըլի՛ Տավի՛ա, քու կլխուն ու քու արևուն մեռնիմ,
 Ընչի՞ գգողորիս պմպի,
 Ջըդ էրիդասարդնիր, ըմեգ մեգ՝ մի դան ջրակ ը,
 Ըմբես մարա գը՝ թըժը նշանվաշ ը,

Ըմբես գը՝ գնիգ, ջտր դեր ք,
 Մըքի չըք էգի քեզ վրը գոհիվ,
 Մելիքն ը վմպի հըվըքի, Վոռովեն պերի,
 Ընչի՞ գգողորիս վմպի:
 Ըքը. - Մելիք ո՞ր ը:
 - Է՛, հընը Վերի կիղ (Հըլը ըղ անուն Վերի կեղ ը միճն միգը),
 Էն չադր օր գը,
 Մուխ օր գպարպրանը,
 Էնի մուխ չէ, պերնի գոլորչին ը, լա՛ր,
 Ջծին գըքը, գերթը գհասնի չադրի տուռ:
 - Մելիք ո՞ր ը, - գըսը, - հըվըքի ը վըդ խեղճիր,
 Լ.յի տաշտ ու տուրան, գիդը գողորիլ,
 Գովիլ գուզը՝ թուխ իքը յըս - ինք գովինք,
 Ինչի՞ ը պերի վըդուք,
 Ո՞ր ը, ըսեք, թուխ Է՛լի:
 - Տավի՛տ, - գըսին, - Մելիք յոա օր բղի քնի,
 Իրիք օր քնիր ը, հըլը չուրս օր բղի քնի:
 - Քնիլ-մնիլ յըս չըմ կինը, իմպեք՝, թուխ իքը:
 Գշողյուն շիշ տրին օդայ դազը,
 Գվառվի, գըսը. - Անդեր ըղ մոչազնիր չըն թողը մարտ քնի:
 Գժոը մյուս գողկի վըրեն, ձխոը:
 - Հանեք՝, թուխ իքը:
 - Տավի՛տ, Մելիք յոա օր բղի քնի,
 Իրիք օր քնիր ը, հըլը չուրս օր բղի քնի:
 - Քնիլ-մնիլ չըմ կի՛նը, իմպեք՝, թուխ իքը:
 Մելիք չտորի առաճ փորի ը յոա կազ հոր,
 Խալին փոի վրեն,
 Օր Տավիտ իկը՝ խտալին թըլին ըղ հորի մեճ:
 Գշողյուն մէ էրգաթ է թիգունքին գտրին,
 Մեզ լը՝ օդայ դազ:
 Մելիք գիմը. «Օհո՛, Տավիտ հնդը տուռ գւանուգ»:
 Գվչը, օր Տավիտ թոնի՛
 Տավիտ դեխիս չշարժվի:
 Յոտ կոմշու ուժ գրագուի ըղ մէ փչելու վրեն:
 - Տավի՛տ, քու կլխուն, քու տրնուն մեռնիմ,
 Տու կիդես յըս քնո՛ւգ իմ էղի,
 Իճի՛, Էլիմ լվայվի՛մ, իկաք հայ ուղիք, խըյճեմ՝ խմի՛ք:
 Մըր գոհվ՝ գոհվ ը, գգովինք,
 Ուղիք հայ՝ Էլիք գովի՛ք:
 Տավիտ գիճնի, գտրը օղվին խալու վրը՝ կնա՛յ...
 - Ա՛խ, տ՛խ, ա՛խ, փիճխեն էգիրը Մելիքի հի՛դ գ՝գովի:
 Էլավ պերիս ճաղպիմ՝ քար, տրիս հորու վրեն,
 Կնայ իրին համար չայ ու խըյճը խմը:

Օենով Օհան քնավ,
 Դեսավ, օր Մասնա աստղ մըլուիր ք:
 Էլավ նստավ՝ տղոթը ը գենը
 Գնիգ իմպավ.
 - Ի՛նչ ը, պը՛տ-պը՛տ, չըս թողը քնի՛ք:
 - Գնի՛գ, - ըսիս, - Տավիտ փործտնքի մեճ ը,
 Մըր աստղ մըլուիր ք:
 - Է՛դ ը, տու ու քու Տավի՛տ,
 Յըս ի՛նճ կինամ Տավիտ հիմի ո՞ր ը,

Ախճույս հիդ քըս - փըս ը գենը,
 Է՛դ ը, փրգիս պքու Տավի՛տ քպի,
 Դը թո՛ւղ քնիք:
 Թարգավ քնավ.
 Դեսավ՝ Մասնո աստղ էգավ հը՛յ գխավարի:
 Էլավ նստավ՝ Է՛լի գաղոթը:
 Գնիգ իմպավ.
 - Ա՛յ մա՛րտ, ի՛նչ էղավ քպի, - գովավ հիդ:
 Էլի բարգավ:
 Դեսավ, օր մնայ մեզ պիչ, արտեն մտրավ:
 Ըլ գնգան անգաջ չենը,
 Գթոնի հըսնի թավլեն, իրեք ծին գաբուգ ին.
 Գվըրգը ծիոք Միպտագ ծիու վրեն,
 (Ըղուք լը ըրըքներու ծիանույ ին, պուլուր գխոստն):
 - Միպտագ, - գըսը, - յը՛պ գհըսուս պըս Տավիտ գովին,
 Գըսը. - մինճն քաշին:
 - Հը՛, - գըսը, - Էն օր դվիր իմ քպի, հըրա՛մ էղնի:
 Զըրգիս Գարմիր ծիուն,
 Էղ լը ըսիս՝ մինճն արիվ տոնը:
 - Էն ըր դվիր իմ քպի, հըրա՛մ էղնի,
 Մինճն արիվ առնը, յըս ինճի՛ն գհըսնիմ:
 Էլավ ծեռ վըրգիս Անուգի վրեն,
 - Սնո՛ւգ, յը՛պ գհըսուս:
 - Օհա՛ն, - ըսիս, - քաշը՛ պըսի տուռ,
 Թամք լա՛վ պը,
 Մինչև պքու օդ տրիս պընգուն, ուղղվի՛ս,
 Յըս գհըսում պքպի Տավիտ գովին:
 (- Է՛, Էրտնեգ յըս լը օն էղնեք,
 Էրթենք Տավիտ գովուն):
 Գքաշը պտուռ, գքաքը պըրգտտ,
 Գնստի, գժոյու՝ Գաբլորտ կլուխ գգաննի,
 (Վերի կեղի կլուխն ը),
 Ընդիս գրոռը. - Է՛յ հե՛յ, Տավի՛տ, Տավի՛տ:
 Օենով Օհան յոա գոմշու գաշի գփաթը ընքի,
 Գրոռը, օր չտրտքվի.
 - Ո՞րդեխ իս, լա՛ր, պքու հոր աջ թևի վրը խտն ըգտներ,
 Գանճը պըն խտն ու պքպի թա՛փ դուր:
 Գէրթը ծեն ընգնի հորի մեճ՝ Տավիտ անգաջ:
 Գըսը. - Ըհը՛, ըմ ապո ծեն էր:
 Թափ գիդը ընքի,
 Ըտղիս քար կնա՛յ...

Կնայ, գտնավ Մելիքի տուռ, ըսիս.
 - Մելի՛ք, Էլի գովի՛ք.
 Ամեն մեզս իրիք դըրք գվըրգիք:
 - Մոճի հերթ վի՛րն ք:
 Ըսիս. - Թըխ էղնի քե՛զ:
 Հտ՛, կնայ գաննավ:
 Մարա Մելիք կնայ Դիարբեքիր,
 Ընդիս էգավ, էգավ պարգիս գուրպը,
 Թոզ Էլա՛վ, ամբի նման արիվ արկլիս,
 (Խո չանավ պՏավիտ):
 Հրեշտագնին ու ծին՝ պՏավիտ թոպպին:

- Մելի՛ք, - ըսիւ, - գենաանի իմ, մե՛գ լը արի:
 Բշիւ կնայ Հըլը:
 Հըլը բգաւ, պթով օր պըրգիւ,
 Ավելի բեթար մըրըխուդ պոնիւ:
 - Մեռի՛ր, - ըսավ, - փի՛նխը Տավի՛տ,
 Էգիր ը, ընչի հիդ գգովի:
 - Մելի՛ք, գենաանի իմ, մե՛գ էլ արի:
 - Օհո՛, ըմ դիխ մոդ էր:
 Բշիւ Մսըր:
 Մսըր էգավ, թովով պըրգիւ,
 Ամբ՝ Արեգակ պոնիւ, ժաժք ընգավ:
 Ըսեցին՝ ժաժք ը,
 Ծաղիկ ըսին. - Չէ՛, քաշերն ը գ՛գովին:
 - Մեռի՛ր, - ըսավ, - փի՛նխըն իգիր ը, ըմ տեմ գ՛գովի:
 - Մելի՛ք, գենաանի՛ իմ, հերթն իմն ը:
 Օ՛, Մելիք, տու գոյին եղնիս,
 Մղավ փոսի մը մեճ,
 Բտոասուն գոմշի գաշին քըշիւ վրեն:
 Տավիտ էգավ:
 Մելիքի գին էգավ.
 - Տավի՛տ, լա՛ն, մեռնիմ ըմ դղին,
 Չէ՛՞ պքի յըս իմ բըհի:
 - Հա՛, ըդ մեգ քու խատր:
 Կնայ, մեգ լը էգավ,
 Բուր էգավ առան.
 - Մախպեր, չէ՛՞ յըս աու քուր, ախպեր իք,
 Էս դըրբ լը դուր ըմ խատրին:
 - Հա՛, քուր քան, ըդ մէ դըրբ լը քու խատրին:
 Ըսեցին՝ մնայ մէ դըրբ
 Ըլ ի՛նչ գենը Մելքին:
 Կնայ, էգավ պըրջըգի թուր շխկոյ՛ւս,
 Դարավ կլխվե՛ր դարգիւ,
 Ըսկի Մելիք չիմայցավ,
 Թը դըրբ առավ ընքի:
 - Տավի՛ա, - ըսավ, - գենաանի իմ, մե՛գ էլ արի:
 - Ըլ չկը՛. «Ա՛յ մարա, թուր խո պըսի չխապը»:
 - Մելի՛ք, - ըսավ, - հըլը պքի թա՛փ դուր:
 Թափ դվիւ, էղավ Էրգու գես:
 Հանիւ տրիւ վերս,
 Ըսիւ. - գանի գիշոհիմ,
 Դեսնամ պթուր ուղիդ գես արի՛ր ը:
 Տրիւ գիշեռիւ,
 Մէ գուղմ՝ յոտ խիդր մյուս գողմիւ շաղ ը:
 Չարմայա՛վ, ըսիւ.
 - Ըմ թուր բետկ ը ուղիդ գողեր, ըդ ի՛նճ պան ը:
 Նայիւ, դեսով՝ օր մեգ բլորեն ը:
 Հա՛, բառաք ըսիր ը. - Տավի՛տ, լա՛ն, օր
 Մելքին գհախախ՛ս,
 Մուրքի մաւ՝ գլըգիս պերիս,
 Գշիքիս քսի չվան, ընի չգողի,
 Գերթա Օիրնգադար, գշըգիս քար,
 Պերիս շիքիս քսի դուն:
 Տավիտ թըրեգան գըրգը պմուրուք:

Էրգու կաւ գես՝ մուրքի երգարութունն ը:
 Բլոն գաննավ.
 - Ըմ հոկին ըմ կառան,
 Ըդ ի՛նչ ը վըր շան մաւ գլոխքիս:
 - Ապո՛, գդանիմ, ճոճոն շիքը ընչի չվան,
 Գերթամ Օիրնգադար, պերիմ քար, շիքիմ ընչի դուն:
 - Վըլը օսկիմ, գիդամ քսի, լա՛ն:
 Մուրքի մաւ լոբգիւ, նատավ Բուրիգ Չըլըլու վրեն,
 Կնայ Բաթմանա գարմնքի կլուխ բոռայ.
 - Արե՛ք, ապոդ եք, կնայե՛ք:
 Մեգ էլ, մեգ էլ չիկեք Սասնա վըր գոհի:
 Ապա՛դ եք, կնայե՛ք տըրեք, մտրտու պան չիդեք,
 Դուրք, դալիք, խարք պան չիդե՛ք:
 Էգան ընցան, լստգվան:
 Ըդենց շնորագաւ էղան կային:

Էգավ էլավ Ձովասար:
 Վըր քեռի Թորոս էգիր ը Խուր, Բլանուխի գողմիր,
 Էգիր ը իմացի պճավաի գոհի Մելիքի հիդ,
 Հըմը գթըլը պծեռ պարդին՝
 Գքըշը տըր թսին ու գերթը,
 - Էրթամ օկնուչուն Տավտին:
 Գերթը դեսնը՝ Տավիտ ճարտ դվիր ը:
 Ձովասար՝ ոաստ էգան իրար:
 - Թեռի՛, - ըսիւ, - Մելիքին սաղգի՛:
 Թորոս պարդին թըլիւ ըդեխ, թորգին էգան:
 Տավիտ էլավ կնայ բառվու դուն:
 - Ծոճո՛, էլի՛, - ըսիւ, - մաւ պերիր իմ,
 Էլի՛, շիքը չվան:
 - Լա՛ն, յըս գըռնա՛մ պըդի չվան շիքիմ,
 Դար ճախրագ, դուր Դունոն գշիքը քսի չվան,
 Պայծ լա՛ն, պիր գիշոհի.
 Յըս Դունոն բաղանկ գարիմ,
 Մէ միւրի մաւ ուղարգեցի կնայ, /
 Գես նուգի կողպիր էր,
 Գկողնը, շիքը հորթերուն գաք:
 Պիր գիշոհիմ, դար ըսը՝ չկողնա՛ս:
 Գիշոհիւ, հըրքմ յոտ խիդր
 Դարավ կնայ Դունոն դուն:
 Դունոն հընդեր տուո նատուգ:
 - Դունո՛, - ըսիւ, - ա՛ն պըր մաւ, շիքը ընչի չվան,
 Գելիմ Ձիրնգադար, քար պերիմ, շիքիմ ընչի դուն,
 Ըդի խըլիմ ը՝ չգողի:
 Մսրա Մելիքի մոքուքն ը,
 Հըմը չկողնա՛ս, գիշոհի իմ՝ յոթ խիդր ը:
 - Չէ՛, լա՛ն, չըմ կողնը:
 - Ծոճոն գըսնը՝ միւրարմ՝ դվի կողնի,
 Գես նուգի կողպավ ընդըր թելեն:
 - Հա՛, պքու ճոճո հոկին սըղընին եղնի:
 - Դէ՛, դէ՛, ճոճոյ պան մ՛ըսը:
 Ծիքիւ չվան:
 Տավիա էգավ դարավ:

Մէ քար հընդեր բառվու տոան տոան, չըր էլի:
 Դարավ չվան, կնայ:
 Բառաբ ըսիւ. - Լա՛ն, պղը քար քը՛2, դեսնանք
 չվան չ՛գորի՛:
 Թըլիւ պքար քըշիւ,
 Բար, ֆը՛ստ, էլավ:
 Ընգտվ առան. - Լա՛ն, քըշը՛, քըշը՛:
 Բըշի՛ւ, պերիւ արդու գողկ՛:
 - Լա՛ն, չվան հողը թուղ,
 Դանիւ, քու դադոն գվերու, յըս գըրիւմ:
 Չվան վերցույ:

Տավիտ նստավ պծին ու յա՛լա,
 Արտեն տառցիւր ը գարկին դղը:
 Վարգիւ պծին կնայ, օլրդա՛վ,
 Էգավ հըսավ Քաղվական:
 Դեսավ մէ լավ այկի, ի՛նչ էգի ը.
 Քաղվականը մալաչի դանչն ը.
 Մըլվըք հըսի՛ր ը...
 Իճավ ծիույ:
 Էրգու դանչի յառ ճարաիւ թըլիւ կեղին,
 Հըվըքիւ հըսուգ դանչիւր, գերավ,
 Էլավ ախարի վրը՝ բարգավ քնավ:
 Սըբար դարան Սանդուր խանըմին:
 Սանդուր խանըմ սառցիւրը Էստուն դարեգան.
 Ուխտ ը արի. «Մինն ընչի հախտող չեղնի,
 Յըս բլի մարտ չառնիւմ»:
 Բոբեգան շորիւր գիոխը Սանդըթ խանըմ,
 Քհակնի դղամարաու շոր,
 Չտիմագ գիոխը, պամեն մէ սրսն,
 Քիկը՝ Տավիտ հընդը քնուգ:
 Օտկով գվըրգը. - Էլի՛, Էլի՛ դեսնամ,
 Տու ի՛նճ մարտ իս, ի՛նճ ը.
 Զու հոր բախեն՛ն ը, խո վայրենի չի՛ս:
 Չտնկ գպանը, գըսը.
 - Ա՛յ մարտ, ընճի՛ գնեղենաս,
 Քոիվ գուպիս՝ գելիք գուլիք:
 - Այո՛, - գըսը, - գոի՛վ գուպիս:
 Քելին գքին պիրար մինն իրգուն,
 Քվերու պՍանդուր խանում պարգը կեղին,
 Չոք գվըրգը սրդի վրեն, օր պկուլս գորը՝
 Սանդուր խանըմ գըսը.
 - Տալի՛տ, քու ծիոք եդ քաշը, յը՛ս ախճիգ իմ:
 - Ի՛մալ, ախճիգ ի՛ս:
 - Ախճի՛գ իմ:
 Դոշիւր գպանը՝ ախճիգ ը...
 - Յըս Էրտում իմ արի,
 Մինն ընչի հախտող չեղնի՛

*Չըրքար հընդը գաննուգ, քրտիւր գըսեն. կըվր՛ տիդան, հայեր լը՛ թառվու
 քար, իպր բառաբ նը պերի: Յըս կաղիւր իմ դեսի. գողըրման դարին,
 ղընդըր Յըլըմու տուր գաննուգ, արդու գողկ (ծան. վիպասացի):*

Յըս Էստուն դարեգան ախճիգ իմ տառցի,
 Յըս մարտ չառնիւմ:
 Հիմի տու պընչի հախտեցի՛ր.
 Յըս քըվի գին, տու ընչի՛ Էրիգ:
 - Ախճի՛, վըլը լավ գըսիս:
 Էլւն կտցին դուն:
 Սանդուր խանըմ շորիւր փոխիւ,
 Իսկըքես, հուրի-փերի տառճավ:
 Էրգու օր մնայ,
 - Սանդուր խանո՛ւմ, - ըսիւ, - Էլի Էրթանք Սասուն:
 Համաչայնվավ, ի՛նճ բըղ Էնը...
 Էլան, թողին Էգան Սասուն:

Էգավ բառվու դուն,
 Կնայ Զիրնգադար:
 Ք՛գորը բազալտ քտր, պերտ գշիքը,
 (Չպերտի քըրիւր լը դեսիւ իմ, երևագայի՛ր,
 Էրգու մետր Էրգարութուն ը, մետր ու գես
 պարծրութուն շաղ ը):
 Քդանը պՍանդուր խանըմ, տըր մեն, գդեղավորվին:
 Քելի ինք նստի պծին՝ գօլրդի,
 Քիքը հըսնի Սլաթ:
 Այկիւմ՝ ըգը ըղեն, այկի, քու դուն ավրի...
 Ինչ մըլը աշխարհ սաեդչիւր ը՝ գը մեն,
 Է՛լ Սլըթը խնչուրն ը,
 Ըլ յըս ինճ կիդեն, ամեն պան ըգը:
 Քմդի բաղի մեն.
 Զընիւմ՝ խնչորենի գճարտը, թըլը կեղին,
 Դանչիւր ու թուգ գճարաը, թըլը կեղին,
 Քքաշը գո՛ւշա գուղը,
 Քելի ախարի վրեն՝ գքնի:
 Ծին հընդը բաղի մեն գարաչը:
 Սըբար գդանին Քուլփերուն:
 - Քուլփերի՛, - գըսին, - Էգիւր ը մէ ծիավոր, մդի քու բաղ,
 ճարաի խնչորի չառնիւր, պքիւր, պան չթողի.
 ճարտի, ավիւրի, խըրըքը ը արի բաղ:
 Հըմը՝ գփոխը շորիւր,
 Քհակնի դղամարաու շուր,
 Քիկը դեսնը՝ հընդը քնուգ:
 Քգարգը գողկին. - Սրի՛գը, - գըսը, - վայրենի ա՛րճ,
 Սուշ օր խուշ ը՝ ըմ Էգու վրայով չընցնի,
 Տու քը՛նի կլխանի իս,
 Օր Էգիւր իս, վայրենու նման չառնիւր ճարտի, փշորի:
 Քոիվ գուպի՛ս, Էլի՛ գուլինք:
 Քգարտի Տավիս. - Էլ քու խըժէխըժ ինչի՛ս ը,
 - Վըլը գոիվ գուպիս:
 Քելին գքին պիրար:
 Մինչև իրիգուն գուվան,
 ՉԷ՛, մութն ը:
 Տավիտ, Է՛, քրդնփճիւր ը:
 - Էլի Էրաանք ուլինք հայ,
 Նուր Էլիք լուսուն՝ գուլիք,
 Մըր գոիվ՝ գոիվ ը:

- Հա՛, լավ գրսիս:
 Գիկան հայ գուդին, բարգին քնին,
 Ղէլին առավողյան գբին պիրար,
 Դանին-պերին, քար, հնավորուչուն չկը՝
 Չըն գըռնը հախաը պիրար:
 Իրգուն գերթան քաշին, բարգին,
 Լուսուն է՛լի գբին պիրար:
 Գ՝գբին պիրար, իրանց պերնի գուրոշին մուխ ը գաբի,
 Միճն չոքիր հողի մեճն ը գթաղվին,
 Գոմշուց բեթար՝ փնչապիր ին գիկան իրար, իւա՛ջ չկը:
 Գիքը քաշ գանցնի՝
 Գվերու Գուլփերուն վըրգը կեդին.
 - Ծէ՛, առ պըսի վառեցի՛ր,
 Գաննի՛ հկամ քու հըխեն:
 - Տավի՛տ, օդա յոդ քըշ, յու ախճիգ իմ,
 - Ի՞մալ, ախճիգ ի՛ս,
 - Ախճի՛գ իմ յոսի:
 Գէլի գըսը. - Դո՛, քելը երթանք, քե՛լը:
 Գիկան դուն:
 Գուլփերին գընցնի, պուր տիմագ, շորիր գփոխը, գիքը:
 Տավիա դեսավ՝ խիւք ընցավ...

Գմնը Գուլփերու մոդ վից ամիս:
 Գուլփերին մնաց երեխով:
 Տավիտ մդաչից ըսից. «Էս Խլաթ դիխ չէ,
 Աշխարկ յոսի բոդիր իմ,
 Հըլքը նման դիխ՝ չըմ դեսի,
 Բոդի երթամ Հըլքը, սարկիմ պպերաը,
 Վերում ԿԳուլփերին,
 Վերում ԿԽանդութ խանըմ, իկամ Հըլքը՝ աբրիմ:
 Էլավ, վերուց փեժգիր.
 - Գուլփերի՛, - ըսավ, - եթե դղը եղնի՝ գ՛գաբիս թիվ,
 Թը ախճիգ եղնի՝ գթըլիս կլխու վրեն:
 Գէլի գիքը Սասուն՝ Խանդութ խանըմի քով:
 Օրմ՝ - Էրգու գմնը:
 (Էրանիգ, պըն օր յը՛ս լը կացիր եք):
 Վըլը գանճից ԿԹումուն.
 - Թումո՛, լավ քարթիգ դղեմ՝ը կդի քիպ հիդ, արե՛ք ըմ հեդ:
 Թումուն ըսից. - Միսա՛գ, քելը երթանք Տավտի հիդ:
 - Էրթանք:
 Էգաք: Էգաք Հըլքը:
 - Թումո՛, - ըսից, - առ փորը,
 Միսա՛գ, առ ճրը, տնգի պի՛ր,
 Ընքի լը քար գդրից, պերից.
 Մարա չգըռնը պոդ քըրիր վերցու:
 Թափիր ին՝ է՛լ հըլիր, ըրքընիր,
 Մէ խոսքով, պիրտը շինից,
 Բարապնիր քըշից չուրս գողմ,
 Ջպերտի առու՝ դըրգըն թողից:
 Միճնապերա առաճի անկամն ը գշիքը,
 Օր քար պան ընցու:
 Միճնապիրա բադրաստից, դասնչուրս դարի քաշից:
 Այկին՝ մըլվեք հըսի՛ր ը, թափի:

- Թումո՛, - ըսից, - մըլվեք հըլվքե՛ք, չհուդի, չախե՛ք ծպի:
 Ըմեն պան ավարդի՛ց, բոչավ, ըսից.
 - Յըս շո՛ւդ գիքամ,
 Ծադ-շադ քաշը մէ դըսնհինգ օր,
 Կերթամ պերիմ ԿԳուլփերին, Խանդութ խանըմ,
 գիքամ ըդիխ.
 - Թումո՛, - ըսից, - պըդ մըլվեք հըլվքե՛ք, չփջանը,
 ափսո՛ս ը:

Գիքը գէլի Սասուն,
 Հըքում՝ գերթը Գուլփերու եդիվ:
 Գուլփերին ը. եդիր ը դղեմ՝ը,
 Սովորագան օրուց ճարաիր ը՝
 Կացիր ը երգթեն բադրասաիլ դվի, պերի դղեն արի մեճ.
 Բնդը թիլ գաբի վրեն,
 Ըր նաֆապ հանիր ը՝ փոթիր ը:
 Պերիր ը սելի չաթու չվան՝ փաթթի վըր փորուն,
 Էրգթը օրոցքի մեճ ըր գհապը՝
 Ամեն մեգ չվնի գդոր՝ իրին գերթը:
 Կերթը պերը մէ կուանի ժնջիլ, փաթը փորի վրեն:
 Մեչցավ, օրոցքի միճուց Էլավ:
 Գուլփերին ինադ արից, շուր չգաբից թիվ:
 Ինք կինը, «Տավիա հըսավ ծիոք՝ գվերճացու»:
 - Թուխ երաը, ԿՏավիա որդելս պոնը՝ թուխ վերճացու՛.
 Յըսի քոչ ե՞ք, կնաց դեսավ ԿԽանդութ խանըմ՝
 Չըմ թա՛րգ դվից:
 Գջամփը դղին. - Լա՛ո, կնը էս քամպով Ձովըսար,
 Կնը պքի Ձովըսարով բոդի:
 Դդի անուն՝ Տավիա՞ր արի,
 Հա՛, դղեն գիքը:
 Տավիա գդեսնը՝ մէ քըհել, սիրուն դղը
 Էգավ Միվ սարու գողմից,
 Էգա՛վ Էլավ Ձովըսար:
 Գդեսնը՝ չէ՛, շուր, պա՛ն չկը թիվ.
 Գարիամարը, գոխկով գընցնի:
 Գիքը բոռը. - Տու օ՛վ իս,
 Տնի պինչ արհամարհեցիր, պըս ընցար:
 Ծեն գըրդի Խանդութ խանըմի անգաջ,
 - Ամտ՛ն, - գըսը, - Տավիա գովի պոնվավ:
 Դղեն գիճնի ճիուց՝ գ՛գբին պիրար:
 Միճն Խանդութ գէլի պերաի կլուխ՝
 Հըմը՝ գհըսնի Տավաին թըլը գծիո ու լոռդը ընդիխ:
 Տավիա մեճկ, խը՛րպ, գճարավի:
 - Մ՛յ:
 Խանդութ. - ըհը՛, - գըսը, - մեռա՛վ:
 Գ.բոռը, գվըրգը չոքերուն,
 - Տավի՛տ սպանվա՛վ:
 Վերքոն ըն գողմից.
 - Խանդութ խանը՛մ, ընչի՞ գիլաս,
 Տավիտ կնաց, Վերքո՛ն սալս մնը:

*Սեր ընդմիջարկությունը՝ Միե՛ր է, յանասացը պատասխանեց. -
 Էրգիր՝ Միե՛ր լը գըսեն, պայծ յոս մըր Թումոյից լսիր իմ՝ փոքր
 Տավիտ: Կըց տու սովորիս բադմիս:*

Խանդութ խանըմ՝ յա՛լա,
Գթըլը ուրին պերաի դագ:
Ոն ը կնայ:

Ե

Փոքր Դավիթ

Մնայ Փոքր Տավիտ. եղավ կապան,
Մարտու գողկով անցնի,
Ըդքես հանգիստ հանկ հանը՝ զընգնի գմեռնի:
Էլ հնավորուչուն չկը. Ո՛չ Բըանուխ արբիւ,
Ո՛չ Մշու տաշտ արբիւ,
Ո՛չ մըր Մասնու գավառը, ո՛չ Խութը,
Ըր հուլմեն, օր գիտվը,
Դուն ու դիխ առնը՝ գիջայու:
Էլան ժողովուրտ հըսան պիրար, ըսին.
- Էլիք էրթանք Սուրա Մխպերիգ,
Վարտաբեդին խնդրինք, էլիք ժամ ու աղոթք ենիք,
Բըլքի տստչույ՝ ըդրգը բըլեն իքը:
Էլան կնային, Վարտաբիդ ըսավ.
- Խըբար արեք Մշու տաշտ, Բըանուխ, Խլաթ,
Խութ, Մասուն,
Թըխ պոլո՛ւր մաղղով իքան, էստեխ գաննին,
Մաղաղ ենին, խունգ, մում յխին, ժամ ենին,
Բըլքի ըդույ մեճ արտարմ՝ գեղնի,
Աստվաչ գլսը պիրանց ծայնը.
Սասվաչ պըդի գբաղնջը:
Գհըվըքվին գերթան, գաղոթին...

Տավիտ գերթը Խլաթ,
Գերթը, օր ծորագով անցնի,
Միչ ժայում՝ գապավի՝
Ինք ու ծին իրարու հիդ գերթան ժայռի մեճ:
Ժայռ գիքը իրար:
Տավիտ մնայ ընդի՛խ:
Հըլը սախ ը.
Հընդը ծեռքիր, օդքիր գաբուգ:
Գըսը՝ ծին գլիպը, լիպը շղթանիր,
Էգիրը, օր գորվի,
Սվագ հինգշաբթին օր ըգանը,
Տարիսնիր պիրանց չաքուզ գպըրգին էրգթի վըր:
Ըդուք որ վարգեցին էրգթի վըր՝
Չնջիլ գնորոքվի:
Երա օր փոքր Տավիտ աուրս եգավ՝
Էրգրակունդ մարտ չմնը:
Փաստորեն քիշա ը,
Հիմի փոքր Տավիտ տուրս ը իգի,
Մտոմային ոռմբ աուրս եգավ,
Նետրոնային տուրս եգավ:
Տավիա էրգիր մարտ չթողը, սուդ պան ը...

2(2). ՄԱՍՈՒՆԸ ՏԱՎԻՏ

Տավիտ, ըր Միեր մեռավ՝
Դարան Մսըր, դվին Մելիքի մամ բըհեց:
Էրեխը էր, բըհեց:
Զիչ մը պարծրցավ, կիցավ ըդի ուժով էր, գախտեր՝
Տրեց էրգու մարտու հեղև, ըսեց.
- Կայե՛ք, դարեք վըր գարմնջին՝ քյեք մըճ կեդուն:
Էգան վըր գարմնջին, ըսեց.
- Մելի՛ք, թը՝ յը՛ս.
Պոնեց պերգուս պըրգույ պիրար,
Մըրեց մեճ ճրին ու ընցավ:
Էգավ Մասուն:
Էգավ Մասուն, պոնեցին տրին կառնեռաչ.
Մղվես քիսավ՝ պերեց,
Լաքստրագ քիսավ՝ պերեց,
Ինճու քիսավ՝ պերեց,
Իրգուն պերեց, լյեց մըճ քաղքին:
- Է՛, Էլե՛ք, ծըր ուլեր չար ին, չըմ գըրի բըհի:
Էլան՝ ջընըվըրդանք պոլոր հըվըքերը պերե,
Վապ եգան իրնը:
Իդաղ մնայ Մելիք.
Իմայտով, ըր ուժեխ ը՝ հըվըքեց, եգավ:
Էգավ՝ գողով ը գչափը պոսկին Ծենով Օհան:
Տավիտ ընդը բաով ու գորեգ արդին՝ դուշ ը գպըրգու:
Բառտով կնայ ըսեց.
- Տավի՛տ, լա՛ո, ընդը Մսրա Մելիք եգեր ը պորքով,
Օսկին քու ապոն գողով ը գչափը,
Զելը դես պուր ջար,
Էգեր իս պըմ գորե՞գ գավրիս:
Էգավ դեսավ՝ հուպիգ գողով գչապը պոսկին:
Մոավ պգող, տարդգեց կեդին,
Վերույ լյույ քիչ մը վըր չգուն՝ շրճեց,
Լյեց-թափեց:
- Հա՛, ըսեց, դնապ ը գենի՞ս պիս:
Վերույ պգող՝ ա՛ո հա կլոխ,
Տըր գերաղ գող...
Մելիք էլավ փախավ:
Փախավ, կնայ Մըսըր,
Հըվըկեց պորք, պոլոր անհաշիվ ու եգավ:
Էգավ, Տավիա հընդը էլի մըճ արդուն, դուշ ը
գպըրգու ուրին:
Էգավ օդի, բառավ կնայ, ըսեց.
- Տավի՛տ, լա՛ո, ըսեց. - Մելիք պորքով, պանով եգեր ը,
Լյեք ը վրաներ, աաշա:
Կնը՝ գոհվ ենը ըր հիդ,
Էգեր իս պըմ գորե՞գ գավրիս:
Տավիտ քըշեց սրարդին, տրեց վըր թեին՝ կնայ:
- Է՛ բալա՛մ, - ըսավ, - ըդրով գոհվ չըս ենի՛,
Կնը, տիր վըր քու հոպգա հոկուն՝
Մ՛ո պքու հոր ծին,
Չքու հոր փափախ,
Չքու հոր օղնաման,
Չքու հոր խըլիշ ու կնը՝ գոհվ:

Կնայ տրից վրը.
 Բըշից Բուռիգ Ջալալին հանեց,
 Պերեց փափախ, օթ խիդր պաւքազ քպսեց մեծին՝
 Նոր գաննաւ կլուխ:
 Չօղնաման օթ խիդր սրաւքազ քպսեց՝
 Նոր գանաւ օղվինին:
 Խըյիշ օթ փաթ եգաւ վըր միճվուն:
 - Կնը՝, - ըսեց, - քաւա՛մ,
 Կնը՝ Չատնով ախսպուր,
 Լողգվի, խմցու պըու ծին,
 Նուր քարգի քնի:
 Օր իմպար էլար՝
 Պամքազ հանիր կլխարգեն,
 Չորով իճաւ քու կլուխ,
 Օղնամներ քանդիր՝
 Չորով մղաւ քու օղվին,
 Խըյիշ մեզ փաստ՝ փորով հըսաւ վըր քու փորուն,
 Կնը՝ գոհվ, կնը՝, - ըսեց, -
 Բողբոջ սուն հընդը վըր քամպուն,
 Չը՛րգ պթուր սըրը,
 Թը գդրից ընցա՛վ,
 Ըսը. «Աճկեր տու լուսովնաս, թներ աու ուժեխնաս»,
 Թը չգդրեց՝ մէ՛րտը:
 Կնայ էնեց պըդի,
 Կնայ գոհվ, գողորեց:
 Մելիքի փորքեն չերունի մարամ՝ եգաւ, ըսաւ.
 - Տաւի՛տ, քաւամ, չէ՞ օր հըրմեզ թըժը նուր հարսի դերը,
 Մեզ դանմ՝ չուխը,
 Ժողովուրտ օրի՞ գ՝ գողորիս,
 Կնը՝ վըր Մելիքին գոհվ:
 - Ո՞ւրը Մելիք, - ըսեց:
 - Է՛, ինը վրաներու չուխը զսըրը ուրնը,
 Հըրի գրագ չգբի քթին՝ չիմնը:
 Բշեց կնայ:
 Մելիք հընդը քնուգ:
 Չարմրեց խուփ պըրգեց օղվի դագ:
 Էլաւ: Ըսեց. - Էլի՛, գոհվ էնիք,
 Թնել-մնել փարը չենը:
 - Հերտ իմո՛ւնը, թը՝ քմունը:
 Ըսեց. - քմո՛ւնը:
 Հեչաւ պծին, ֆոա՛ց,
 Բշեց կնայ հեռու ու աարծաւ եգաւ:
 Դըրք մը պըրգուց, թու էլաւ երգինք:
 Ըսեց. - Տաւիա մեռա՛վ:

Թույ իճա՛վ, Տաւիա հընդը ուր դեխ գաննուգ:
 Մեզ լը քշեց ուհո՛ւ հեռու,
 Տարծաւ եգաւ:
 Մեզ լը պըրգուց, թու էլաւ վեր:
 Ըսեց. - Տաւիա մեռա՛վ:
 Թույ իճա՛վ, Տաւիա հընդը ուր դեխ:
 Մեզ լը քշեց ուհո՛ւ հեռու,
 Տարծաւ եգաւ, մեզ լը պըրգուց:
 - Հա՛, Տաւիա մեռաւ:
 Թույ իճա՛վ, Տաւիա հընդը ուր դեխ գաննուգ:
 Էգաւ ըսեց. - Ընչի ը հերտ, թը չէ:
 Բշեց կնայ: Առանի հերտին ըր եգաւ,
 Մելիքի մամ կնայ առան, ըսեց.
 - Չըս ի՞դը պը՛ս,
 Չէ՞ պքի Մելիք հըղդար ըս հսցի,
 Դո՛ւ պըղրա խատր:
 Դվեց: Դվեց ու տարծաւ:
 Բշեց կնայ Դիարքեքի, տարծաւ պվոտվ եգաւ:
 Էգաւ, ըսեց. - Չեղ լը՝ քու քրոճ խաանը:
 Չէ՛ն լը դվեց:
 Մեզ լը քշեց, կնայ Հալաք պվոտվ եգաւ:
 Մելիք քառսուն կապ հոր շինէ մեծին,
 Բառսուն կոմշու գաշի պերէ, տրէ վըր պերնին,
 Ծաղճի քար արէ վըրեն:
 Էգաւ, Է՛մլը մամ ըսեց. - Չըս ի՞դը պըդի լը աասուն:
 - Չէ՛, - ըսեց, - պըդ մեզ գպըրգում:
 Չըրգուց: Ծաղճի քար գքաւ կլխուն՝
 Կլուխ իճաւ մըճ երգու ջվերուն:
 Ըսեց. - Թա՛փ դու պքի:
 Թափ դվեց, մեզ շրճաւ ընտեն, մեզ՝ ընտեն:
 Կնայ ըղաղ Տաւիա Բաշկեղ,
 Ուժեղ մարտա՛ գար հօն,
 Կնայ ընդուր լը ախաեց,
 Հըսը եգաւ, ուր դղան մեչցեր էր,
 Անուն արեր են Միեր:
 Էգան սար, հանդքան իրարի,
 Վերցին պիրար, վերոց-արեց կեդին.
 Տրեց կեդին գմորաեր՝
 Չանչցաւ ուր դղանը:
 Անիչեց, ըսեց. - հողի էրես վըր քպի դեխ չեղնի,
 Բդի հողի դագ աքրվիս,
 Չքպի մա՛հ չեղնի:
 Հընդը Մշու տաշա ուր պլուր:
 Գըսին՝ ծիու շեռ հընդը գիկը՝ էլի աուրս: